Հայտարարություն

Մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Սիփանիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (6 դասաժամ), աշխարհագրության (8 դասաժամ), քիմիայի (6 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ), կերպարվեստի (4 դասաժամ), տեխնոլոգիայի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1)
- մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ.-ի մարտի 28-ից մինչև ապրիլի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ.-ի ապրիլի 15-ին՝ ժամը 14:00-ին, «ՀՀ Արարատի մարզի Սիփանիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ Մասիս համայնք գ. Սիփանիկ Գյումրու փողոց թիվ 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /093/ 630-280 հեռախոսահամարով:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՍԱՀԱԿՅԱՆ